ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.05.2017թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-ԳԲԽ-29/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ՍՑ-ԳԲԽ-29/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.04.2017թ. թիվ 03/73-1/6957-17 գրությամբ ներկայացված «Կոպի սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00036786) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-29/17 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 02.12.2016թ. թիվ 03/73-1/26856-16 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.11.2016թ. թիվ ԴՎԱ/3736 գրությունը և կից փաստաթղթերը, «Կոպի սերվիս» ՍՊԸ-ի 09.02.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն) ուղղված գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.11.2016թ. թիվ ԴՎԱ/3736 գրության հիման վրա, 02.12.2016թ. թիվ 03/73-1/26856-16

գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.11.2016թ. թիվ ԴՎԱ/3736 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերի պատճենները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կենտրոն) 13.02.2017թ. թիվ 01/04.1/441-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 02.12.2016թ. թիվ 03/73-1/26856-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է, որ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով Կարգի 124-րդ կետով, 20.04.2017թ. թիվ 03/73-1/6957-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Կոպի սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Կոպի սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ընկերությունը 09.02.2017թ. գրությամբ հայտնել է, որ համաձայն չէ ՊՆ ՆՏԴ-ի գրության հետ: Ընկերության կարծիքով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով գնման ընթացակարգի 13-րդ չափաբաժնով ներկայացված սարքը հանդիսանում է մրցակից (համարժեք) մրցույթով պահանջվող սարքի նկարագրած բնութագրին: Մասնավորապես, Ընկերության կողմից առաջարկվել է «էջի ելքը մինչև 8 վրկ.», իսկ հրավերով պահանջվել է «էջի ելքը 7,5 վրկ.»:

Վերը նշված օրինակը հաշվի առնելով, Ընկերությունը գտնում է, որ մինչև 8 վրկ-ը չի հակասում պահանջված 7,5 վրկ-ին և նշված վերլուծությունից ուղղակիորեն երևում է, որ ՊՆ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունը գոյություն չունի:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.11.2016թ. թիվ ԴՎԱ/3736 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-29/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 20.04.2017թ. թիվ 03/73-1/6957-17 գրությամբ ներկայացված «Կոպի սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» (պատճենահանման սարքավորումներ, օժանդակ նյութեր և պարագաներ) ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին 20.10.2016թ. հայտ է ներկայացրել և գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

2. Պատվիրատուի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով ընթացակարգի 13-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը. «Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ,պատճեն,սկան/- լազերային, տպման արագությունը 18 էջ /րոպե, թղթի ձևաչափը A3/: Մեկամսյա ռեսուրսը մինչև 15000 էջ: ***Առաջին էջի ելքը 7,5 վ***: Պատճենահանող մեքենան պետք է ունենա Smart drum unit (առագ

,օգտվողի ուժերով փոխարինվող թմբուկի հանգույց): Պատճենահանման լուծաչափը (խտությունը) 600*600 dpi: Պահանջվում է առվազն մեկ տարվա երաշխիքային ժամկետ»:

3. «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով ընթացակարգի N 13 չափաբաժնով առաջարկվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ «Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ,պատճեն,սկան/ - լազերային, տպման արագությունը 18 էջ /րոպե, թղթի ձևաչափը A3/: Մեկամսյա ռեսուրսը 11000 էջ: ***Առաջին էջի ելքը մինչև 8վ***: Smart drum unit (առագ ,օգտվողի ուժերով փոխարինվող թմբուկի հանգույց): Պատճենահանման լուծաչափը (խտությունը) 600*600 dpi: Մեկ տարվա երաշխիքային ժամկետ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2016թ. նիստի N 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին Ընկերության կողմից 13-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրով առաջարկվել էր «Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ,պատճեն,սկան/» ապրանքատեսակի, որի տեխնիկական բնութագրերում նշված է ***«Առաջին էջի ելքը մինչև 8 վ», այնինչ հրավերով պահանջվում էր «Առաջին էջի ելքը 7,5 վ»:*** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

5. Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է նախկինում ներկայացված տեխնիկական բնութագիրը և արտադրող գործարանի գրությունը, որից հետո հանձնաժողովը, հիմք ընդունելով մասնագիտական եզրակացությունը, որոշել է մերժել մասնակցի հայտը՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին ոչ համարժեք լինելու հիմքով, մասնավորապես՝ տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ, պատճեն, սկան/» ապրանքատեսակը, որի տեխնիկական բնութագրերում նշված է ***«Առաջին էջի ելքը մինչև 8 վ», իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է «Առաջին էջի ելքը 7,5վ»:***

6. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.11.2016թ. թիվ ԴՎԱ/3736 գրության հիման վրա, 02.12.2016թ. թիվ 03/73-1/26856-16

գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

7. Կենտրոնը 13.02.2017թ. թիվ 01/04.1/441-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 02.12.2016թ. թիվ 03/73-1/26856-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը հայտնել է, որ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

8. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով Կարգի 124-րդ կետով, 20.04.2017թ. թիվ 03/73-1/6957-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Կոպի սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնել բողոքարկման գործընթաց:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

«Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն՝ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» (պատճենահանման սարքավորումներ, օժանդակ նյութեր և պարագաներ) ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին 20.10.2016թ. հայտ է ներկայացրել և գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Պատվիրատուի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով ընթացակարգի 13-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը. «Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ,պատճեն,սկան/- լազերային, տպման արագությունը 18 էջ /րոպե, թղթի ձևաչափը A3/: Մեկամսյա ռեսուրսը մինչև 15000 էջ: ***<u>Առաջին էջի ելքը 7,5 վ</u>***: Պատճենահանող մեքենան պետք է ունենա Smart drum unit (առագ

,օգտվողի ուժերով փոխարինվող թմբուկի հանգույց): Պատճենահանման լուծաչափը (խտությունը) 600*600 dpi: Պահանջվում է առվազն մեկ տարվա երաշխիքային ժամկետ»:

Ընկերությունը՝ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով 20.10.2016թ. ներկայացրած հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող N 13 չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագիրը համապատասխանում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

«Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից N 13 չափաբաժնով առաջարկվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ «Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ, պատճեն, սկան/ - լազերային, տպման արագությունը 18 էջ /րոպե, թղթի ձևաչափը A3/: Մեկամսյա ռեսուրսը 11000 էջ: ***Առաջին էջի ելքը <u>մինչև 8վ</u>***: Smart drum unit (առագ ,օգտվողի ուժերով փոխարինվող թմբուկի հանգույց): Պատճենահանման լուծաչափը (խտությունը) 600*600 dpi: Մեկ տարվա երաշխիքային ժամկետ:

Վերոհիշյալ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2016թ. նիստի N 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին Ընկերության կողմից 13-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրով առաջարկվել էր «Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ, պատճեն, սկան/» ապրանքատեսակի, որի տեխնիկական բնութագրերում նշված է ***«Առաջին էջի ելքը <u>մինչև 8 վ</u>», այնինչ հրավերով պահանջվում էր «Առաջին էջի ելքը 7,5 վ»:*** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է նախկինում ներկայացված տեխնիկական բնութագիրը և արտադրող գործարանի գրությունը, որից հետո հանձնաժողովը՝ հիմք ընդունելով մասնագիտական եզրակացությունը, որոշել է մերժել մասնակցի հայտը՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին ոչ համարժեք լինելու հիմքով, մասնավորապես՝ տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ, պատճեն, սկան/» ապրանքատեսակը, որի տեխնիկական բնութագրերում նշված է ***«Առաջին էջի ելքը մինչև 8 վ», իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է «Առաջին էջի ելքը 7,5վ»:***

Ուսումնասիրելով Ընկերության կողմից առաջարկված տեխնիկական բնութագիրը՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից առաջարկվել է առաջին էջի ելքը **մինչև 8վ**., իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է **առաջին էջի ելքը 7,5 վ**.: Այստեղից ուղղակիորեն բխում է, որ եթե Ընկերությունը առաջարկեր առաջին էջի ելքը հենց 8վ., այլ ոչ թե առաջին էջի *մինչև* 8վ., ապա այս դեպքում Պատվիրատուն իրավացիորեն կարող էր մերժել Ընկերության հայտը՝ ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից առաջարկած «Առաջին էջի ելքը մինչև 8 վ» չի հակասում հրավերի «Առաջին էջի ելքը 7,5 վ»-ին, քանի որ Ընկերության կողմից առաջարկած մինչև 8 վ.-ը կարող է լինել, օրինակ՝ և 6 վ, և 7վ., և 7,5վ. և այլն:

Ելնելով վերոշարադրվածից՝ Խորհուրդը արձանագրում է, որ գնահատող հանձնաժողովը *հայտերի գնահատման փուլում* չպետք է մերժեր Ընկերության հայտը՝ առաջարկված ապրանքը հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով, այլ Ընկերության կողմից ապրանքը մատակարարելուց հետո միայն, ղեկավարվելով Կարգի 96-րդ կետի պահանջներով, ՀՀ պաշտպանության նախարարությունը կարող էր հիմնավոր գնահատել և համեմատելով պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի հետ՝ ընդունել կամ չընդունել Ընկերության կողմից մատակարարված ապրանքը:

Խորհուրդը գտնում է, որ նման խախտման հանգամանքների պայմաններում «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին՝ Ընկերության կողմից 13-րդ չափաբաժնի մասով 20.10.2016թ. ներկայացրած հայտի N 4.1 հավելվածը՝ չի հանդիսանում Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 20.04.2017թ. թիվ 03/73-1/6957-17 գրությամբ ներկայացված «Կոպի սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00036786) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել և «Կոպի սերվիս» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

անդամ՝ **Հայկ Կոշեցյան**